ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սարգիս Հարությունյան

2003թ. նախագահական ընտրություններում կրած պարտությունից հետո ադրբեջանական ընդդիմությունը 2004թ. վերջերին ձեռնարկեց առաջնորդի փոխարինման գործընթացը: Խոսքը վերաբերում է Իսա Ղամբար - Ալի Քերիմլի («Ադրբեջանի ազգային ճակատ» կուսակցություն՝ «բարեփոխականներ» (ԱԱՃԿբ) նախագահ) զույգին: Իսա Ղամբարի քաղաքական հեղինակության անկման և ավելի պասիվ դիրքորոշման անցնելու համատեքստում աստիճանաբար ուրվագծվում էր Ալի Քերիմլիի ակտիվ գործունեությունը:

2005 թվականն այս առումով, թերևս, կարելի է շրջադարձային համարել: Հատկանշական է, որ փետրվարին ԱԱՃԿբ նախագահը մոտ երկու շաբաթ գտնվում էր Արևմտյան Եվրոպայում (Շվեդիա, Նորվեգիա, Ֆրանսիա) և ԱՄՆ-ում, ուր հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան Ֆրանսուա Տերալոմի, ֆրանսիական ԱԳՆ Վերլուծության և կանխատեսման վարչության աշխատակիցների, ԱՄՆ պետքարտուղարի համաշխարհային հարցերով տեղակալ Պաուլա Դոբրինսկու, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ և Կասպիցի հարցերով ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Մանի, ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Եվրասիական բաժնի պետ Մեթ Բրայնլի, ինչպես նաև հետխորհրդային տարածքում ամերիկյան քաղաքականության մեջ որոշակի ազդեցություն ունեցող հաստատությունների՝ Վաշինգտոնում գտնվող Ազգային ժողովրդավարական ինստիտուտի *(National Democratic Institute - NDI)* և Միջազգային հանրապետական ինստիտուտի *(International Republican Institute - IRI)* ներկայացուցիչների հետ:

Ուշագրավ է, որ ավելի ուշ՝ ապրիլի վերջերին, Ա.Քերիմլին կրկնեց արտասահմանյան այցելությունները՝ այս անգամ մեկնելով Գերմանիա: Բեռլինում նա հանդիպումներ ունեցավ իշխող Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ Հերլոտ Էրերի (որը հայտնի է միջազգային-քաղաքական հարցերի վերաբերյալ կուսակցությունում կայացվող որոշումների վրա իր ազդեցությամբ), Գերմանիայի Կանաչների կուսակցության միջազգային հարցերով փոխնախագահ Ֆրից Կունցի (կուսակցության նախագահն է Գերմանիայի արտգործնախարար Յոշկա Ֆիշերը), գերմանական ԱԳՆ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ռոլֆ Շելսի և այլոց հետ:

Ապրիլի վերջերին Քերիմլին, ի շարս ադրբեջանական ընդդիմության այլ առաջնորդների, ևս մեկ կարևոր հանդիպում անցկացրեց, այս անգամ՝ Բաքվում գտնվող ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Եվրասիայի գծով բաժնի տնօրեն Մեթ Բրաուզի հետ[1]:

[1] Ուշագրավ է, որ Բրաուզը երկու անգամ է հանդիպել Ադրբեջանի ընդդիմադիրների հետ՝ Իլհամ Ալիևի և նրա աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևի հետ հանդիպումից առաջ և հետո:

Անշուշտ, պատահական չէ, որ ԱԱՃԿԲ նախագահի արտասահմանյան այցերից հետո, մարտի 18-ին, ադրբեջանական ընդդիմության հիմնական կուսակցություններից «Մուսավաթի», Դեմոկրատական կուսակցության և նույն ԱԱՃԿԲ նախագահներ Իսա Ղամբարը, Ակիֆ Շահբազովը և Ալի Քերիմլին ստորագրեցին համաձայնագիր նախընտրական ընդդիմադիր դաշինքի («Ուղուր») ձևավորման վերաբերյալ։

Ուշագրավ է, որ «Ուղուր» դաշինքի կազմից դուրս մնաց ադրբեջանական մյուս խոշոր ընդդիմադիր ուժը՝ «Ադրբեջանի ազգային անկախություն» կուսակցությունը (ԱԱԱԿ), որի առաջնորդ Էթիբար Մամեդովի գլխավորությամբ ապրիլի 12-ին տեղի ունեցավ ընդդիմադիր մյուս՝ «Յենի սիյասեթ» դաշինքի ստեղծման վերաբերյալ փաստաթղթի ստորագրումը (ԱԱԱԿ առաջնորդից զատ, փաստաթուղթը ստորագրեցին «Ազգային միասնության շարժման» ղեկավար Լալա Շովքեթը, «Հանուն Ադրբեջանի» հասարակական ֆորումի նախագահ Էլդար Նամազովը, «Ժողովրդավար մտավորականության միության» ղեկավար Ալի Մասիմլին և «Մտավորականության միության» նախագահ Էլդանիզ Գուլիևը)։ Հարկ է նշել, որ ապրիլի վերջին հայտնի դարձավ Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովի՝ «Յենի սիյասեթին» միանալու հայտարարության մասին։

Մարտի վերջին տեղի ունեցավ նաև Ադրբեջանի իշխող «Յենի Ազերբայջան» կուսակցության (նախագահն է Իլհամ Ալիևը) երրորդ համագումարը։ Չնայած լուրեր էին պտտվում, թե Ալիև-կրտսերը մտադիր է «թարմացնել» կուսակցությունը երիտասարդ կադրերով, սակայն, ըստ էության, իրավիճակը մնացել է նույնը։

Ըստ էության, ներքաղաքական ուժերի փոխդասավորվածության ձևավորման ավարտից հետո հիմնական իրադարձությունները մայիսի 4-ին և հունիսի 1-ին կայացած «կլոր սեղաններն» էին իշխանական («Յենի Ազերբայջան» կուսակցության գլխավորությամբ) և ընդդիմադիր (հիմնականում «Ուղուր» դաշինք) քաղաքական ուժերի միջև, ինչպես նաև մայիսի 21-ին և հունիսի 4-ին Բաքվում «Ուղուր» դաշինքի կողմից կազմակերպված հանրահավաքները, որոնց մայիսի կեսերից սկսած նախորդել էին նույն «Ողուր» դաշինքի մաս կազմող կուսակցությունների մի շարք ակտիվիստների ձերբակալությունները։

Իրավիճակն ուժային կառույցներում

Դեռևս 2004թ. դեկտեմբերի վերջին ձերբակալվեցին Ադրբեջանի Բարդայի և Շամխորի զինվորական կորպուսներում ծառայող մի շարք բարձրաստիճան սպաներ, բացի այդ, իջեցվեցին մի քանի տասնյակ սպաների զինվորական կոչումները և պաշտոնները։ Ձերբակալվածների թվում էին Բարդայի կորպուսի կազմակերպչական-մոբիլիզացիոն բաժնի պետ, գնդապետ-լեյտենանտ Վագիֆ Թալիբովը, նույն կորպուսի զորամասերից մեկի հրամանատար, գնդապետ-լեյտենանտ Զիա Նաջաֆովը և այլք։

Իջեցվեց Բարդայի կորպուսի զորամասերից մեկի այլևս նախկին հրամանատար և նախկին գնդապետ Բալայ Նասիբովի կոչումը։ Վերջինս տեղափոխվեց ՊՆ քաղաքացիական պաշտպանության բաժին, սակայն թե՛ Նասիբովի, թե՛ դաստիարակչական հարցերով

նրա տեղակալ, մայոր Շայիղ Խալիլովի նկատմամբ հարուցվեց քրեական գործ, որը քննվում էր Ղարաբաղի կայազորի դատարանում։

Թեև պաշտոնական հաղորդագրություններն այդ ձերբակալությունների և պաշտոնի իջեցումների հիմնական պատճառ նշում էին կոռուպցիան, սակայն, միևնույն ժամանակ, ադրբեջանական լրատվամիջոցներն այդ իրադարձությունները կապեցին Բարդայի կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գաբիլ Մամեդովի անձի հետ։

Հիշեցնենք, որ ըստ շրջանառվող լուրերի, 2003թ. նախագահական ընտրությունների ժամանակ Բարդայի և մի շարք այլ կորպուսների զինվորականության զգալի մասը ձայնը տվել էր ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Ղամբարի օգտին։ Ընտրություններից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը փորձել էր պաշտոնանկ անել Բալայ Նասիբովին, որն այն ժամանակ Բարդայի կորպուսի զորամասի հրամանատարն էր, սակայն վերջինիս օգտին էին հանդես եկել գեներալ-մայոր Գաբիլ Մամեդովը և Ադրբեջանի ՊՆ հանգուցային վարչություններից մեկի պետ Թալիբ Մամեդովը։ Պաշտպանության նախարարը ստիպված էր եղել զիջել, սակայն արդեն 2004թ. մարտին Իլհամ Ալիևի հրամանագրով Գաբիլ Մամեդովը պաշտոնանկ արվեց և որոշ ժամանակ ՊՆ կադրերի վարչության տրամադրության ներքո գտնվելուց հետո նշանակվեց Ղազախստանում Ադրբեջանի դեսպանության ռազմական կցորդ, իսկ Թալիբ Մամեդովը՝ Պակիստանում Ադրբեջանի ռազմական կցորդ։

Մինչև զինված ուժերում տեղի ունեցած իրադարձությունները, 2004թ. ընթացքում շոշափելի կադրային փոփոխություններ գրանցվեցին նաև ադրբեջանական հատուկ ծառայություններում, առաջին հերթին՝ Ազգային անվտանգության նախարարությունում (ԱԱՆ)[1]։ Մարտին այդ փոփոխությունները հասան նաև Ներքին գործերի նախարարություն։

Մարտի 10-ին Ադրբեջանի ԱԱՆ հատուկ գործողության շնորհիվ գլխավորապես Բաքվում վնասազերծվեց հանցավոր մի խումբ, որի անդամներից էին ադրբեջանական ՆԳՆ բարձրաստիճան մի շարք սպաներ՝ ՆԳՆ քրեական հետախուզության վարչության գնդապետ Հաջի Մամեդբեկովի գլխավորությամբ։ Ձերբակալություններից մոտ երկու շաբաթ անց՝ մարտի 23-ին, մեկ օրվա ընթացքում պաշտոնանկ արվեցին Ադրբեջանի ՆԳՆ առաջին փոխնախարար Զահիդ Դունյամալիևը, քրեական հետախուզության վարչության պետ Զաքիր Նասիրովը (ինչպես նաև նրա երկու տեղակալները), թմրադեղերի առքուվաճառքի դեմ պայքարի վարչության պետ Նիյազի Խալիլովը, ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ Քյամալ Սադրադինովը և Բաքու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության պետի օպերատիվ-հետախուզական հարցերի գծով տեղակալ Ջավադաղ Սուլթանովը։

Մարտի 19-ին Իլհամ Ալիևի հրամանագրով Սուդաբա Հասանովան ազատվեց Ադրբեջանի Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից, նրա փոխարեն այդ պաշտոնին նշանակվեց Ադրբեջանի գլխավոր դատախազի այլևս նախկին առաջին տեղակալ Ռամիզ Ռզաևը, որը նույն օրը, ավելի վաղ, խորհրդարանի կողմից ընտրվել էր Գերագույն դատա-

[1] Ավելի մանրամասն տե՛ս Հավելվածը։

բանի անդամ: Մարտի 19-ին Իլհամ Ալիևի ստորագրած մեկ այլ հրամանագրով Ադրբեջանի Վերաքննիչ դատարանի նախագահ Գյուլզար Ռզաևն ազատվեց զբաղեցրած պաշտոնից:

Եվ վերջապես, ապրիլի 26-ին Ադրբեջանի խորհրդարանում կայացած քվեարկության արդյունքում երկրի գլխավոր դատախազի պաշտոնում հինգ տարի ժամկետով վերընտրվեց Զաքիր Գարալովը:

Արտաքին քաղաքականություն

Պետք է ասել, որ 2005թ. առաջին հինգ ամիսների ընթացքում խիստ ուշագրավ էին Ադրբեջանի հարաբերություններն արտաքին աշխարհի հետ: Տարեսկզբին ռուս-ադրբեջանական և իրանա-ադրբեջանական հարաբերություններում գրանցված գործընթացներին եկան գումարվելու որոշ զարգացումներ ամերիկա-ադրբեջանական և ընդհանրապես՝ Արևմուտք-Ադրբեջան հարաբերություններում:

Հարկ է նշել, որ ռուս-ադրբեջանական և իրանա-ադրբեջանական հարաբերություններում հատկապես միջին շերտի պաշտոնյաների շփման ակտիվացում գրանցվել էր դեռևս 2004թ. վերջերին, ինչը, բնականաբար, կարող է վկայել միայն հավանական նոր զարգացումների մասին:

2005թ. հունվարի 24-26-ը տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական այցն Իրան: Թեհրանում Ալիև-կրտսերը հանդիպումներ ունեցավ իսլամական հանրապետության բարձրագույն ղեկավարության հետ: Բացի այդ, իրանա-ադրբեջանական հարաբերությունների պատմության ողջ ընթացքում առաջին անգամ Ադրբեջանի նախագահն այցելեց «Հարավային Ադրբեջանի մայրաքաղաք» Թավրիզ: Հատկանշական է, որ Ալիևի այցի ժամանակ պաշտոնական Թեհրանը՝ հանձին նախագահ Մուհամադ Խաթամիի, ճիշտ է՝ որոշակի վերապահումով, սակայն հայտարարեց Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին: Ուշագրավ մյուս հանգամանքներից կարելի է առանձնացնել այն, որ լուծվեց Թավրիզում Ադրբեջանի հյուպատոսության բացման հարցը, ինչպես նաև Թավրիզի ու Բաքվի միջև հաստատվեց օդային ուղիղ կապ[1]:

Ս.թ. փետրվարի 16-ին Իլհամ Ալիևն աշխատանքային այց կատարեց Մոսկվա՝ Ռուսաստանում Ադրբեջանի տարվա բացման պաշտոնական արարողությանը մասնակցելու համար: Ուշագրավ է, որ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ վերջինս գոհունակությամբ արձանագրել էր, թե 2003թ. համեմատ 2004թ. ընթացքում Ռուսաստան-Ադրբեջան առևտրաշրջանառությունն աճել է 50%-ով (մոտ $800 մլն)՝ հույս հայտնելով, որ այն կհասնի $1 մլրդ-ի[2]:

Ուշադրության է արժանի նաև ապրիլի 7-ին Բաքու ժամանած Ռուսաստանի նախկին նախագահ Բորիս Ելցինի այցը: Ելցինն Ադրբեջանում մնաց չորս օր և հանդիպումներ ունեցավ Իլհամ Ալիևի ու վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ:

[1] Ըստ ամենայնի, Ալիև-կրտսերի այդ այցի արդյունք պետք է դիտարկել ս.թ. մայիսի 16-ին Թեհրանում Ադրբեջանի և Իրանի պաշտպանության նախարարներ Սաֆար Աբիևի և Ալի Շամխանիի ռազմական բնագավառում երկու երկրների միջև համագործակցության վերաբերյալ կնքած հուշագիրը («չհարձակման պակտ»):

[2] Համեմատության համար նշենք, որ, ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2004թ. ընթացքում մեր երկրի առևտրաշրջանառությունը Ռուսաստանի հետ կազմել է մոտ $266,2 մլն՝ ավելի քան $31,5 մլն-ով պակաս 2003թ. ցուցանիշներից:

Եվ վերջապես, որպես ռուս-ադրբեջանա-իրանական շփումների տրամաբանական արդյունք՝ առանձնապես պետք է նշել վերջերս սկսված Մոսկվա-Բաքու-Թեհրան երկաթգծի Ռեշտ (Իրան)-Աստարա (Ադրբեջան) հատվածի շինարարության մասին:

Մյուս կողմից՝ անշուշտ, պետք է նշել ապրիլի 12-13-ը ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի Բաքու կատարած այցը և ՎՈՒԱՄ անդամ երկրների գագաթաժողովին մասնակցելու համար ապրիլի 21-22-ը Մոլդովայի մայրաքաղաք Քիշնև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի այցը: Ռամսֆելդը Բաքվում մնաց ընդամենը մեկ գիշեր և քաղաքի «Բինա» օդանավակայանում հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի ու վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ: Հատկանշական է, որ ԱՄՆ պաշտպանության նախարարին չէր ընդունել Իլհամ Ալիևը՝ Ռամսֆելդի ժամանումից ընդամենը մի քանի ժամ առաջ պաշտոնական այցով մեկնելով Պակիստան:

Ռամսֆելդի այցի հետ կապված՝ մայիսի կեսերին ամերիկյան «*Stratfor*» վերլուծական կենտրոնը հրապարակել է մի տեղեկություն, ըստ որի՝ հենց ապրիլի 12-13-ի գիշերը Ադրբեջանի և ԱՄՆ պաշտպանության նախարարների միջև կնքված հատուկ պայմանագրի համաձայն, ամերիկյան շարժուն զորամիավորումները կարող են տեղակայվել Ադրբեջանում:

Ամփոփում

2005թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրությունների նախաշեմին զգալիորեն ակտիվացել է Ադրբեջանի քաղաքական դաշտը: Ներկայիս ադրբեջանական ներքաղաքական իրադրության կարևոր առանձնահատկությունն այն է, որ ընդդիմադիր ամենալուրջ ուժը՝ «Ուղուր» նախընտրական դաշինքը, շոշափելի քաղաքական, բարոյական, դիվանագիտական և ֆինանսական աջակցություն է ստանում ԱՄՆ ու Եվրամիության ենթակայության ներքո գտնվող կառույցներից[1]՝ նպատակ ունենալով ընտրություններին հասնել առավելագույնի: Ըստ ամենայնի, Իլհամ Ալիևի վարչակարգն այսօր «Ուղուրը» դիտարկում է որպես սեփական անվտանգությանն ուղղված ներքաղաքական, թերևս, ամենալուրջ սպառնալիք:

Մյուս կողմից՝ Ալիև-կրտսերը խնդիր ունի նախ վճռական հաղթանակ տանել նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններում՝ ամրապնդելու համար իր իշխանությունը, և երկրորդ՝ այդ ընտրություններից իր վարչակարգը դուրս բերել հնարավորինս քիչ կորուստներով:

Ակնհայտ է, որ Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում տեղի ունեցած իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել ինչպես ադրբեջանական ողջ ընտրանու, այնպես էլ, մասնավորապես, Իլհամ Ալիևի անմիջական շրջապատի վրա: Գլխավորապես այդ համատեքստում պետք է բացատրել անցած շուրջ մեկ տարվա ընթացքում Ալիև-կրտսերի՝ Ադրբեջանի ուժային կառույցներում իրականացրած փոփոխությունները, որոնք, շատ հավանական է, նոր թափ ստանան ընտրություններից հետո:

«Գունավոր հեղափոխություններն» իրենց ազդեցությունը թողեցին նաև Իլհամ Ալիևի վարած արտաքին քաղաքականության վրա: Պատահական չէ, որ վերջին մոտ կես տարվա ընթացքում նկատվում էր ադրբեջանա-ռուսական և ադրբեջանա-իրանական հարաբերությունների ջերմացում, ինչը, անշուշտ, նպաստավոր էր թե՛ Մոսկվայի, թե՛ Թեհրանի հա-

[1] Այդ առումով, թերևս, հարկ է առանձնացնել Ադրբեջանում գործող *British Petroleum* ընկերությունը:

մար, քանի որ երկուսն էլ փորձում են խոչընդոտել Հարավային Կովկասում և Կասպյան ավազանում ամերիկյան ազդեցության աճին:

Նաև սրանով պետք է բացատրել վերջին շրջանում Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Հարնիշի, *British Petroleum* ընկերության և Ադրբեջանում գործող արևմտյան մի շարք հաստատությունների դեմ ադրբեջանական իշխանական ու իշխանամետ կառույցների բացասական դիրքորոշումը:

Իրենց հերթին, ԱՄՆ-ն ու Եվրամիությունը նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները դիտարկում են որպես այդ երկրում, Հարավային Կովկասում և նավթով հարուստ Կասպյան ավազանում սեփական ազդեցության տարածման միջոց:

Վաշինգտոնի պարագայում վերոհիշյալին գումարվում է նաև իրանական հարցը: Ըստ ամենայնի, 2004թ. վերջին-2005թ. սկզբին պաշտոնական Բաքվի հետ որոշակի խնդիրներ էին ծագել Ադրբեջանում ԱՄՆ շարժուն զորամիավորումների տեղակայման հարցի շուրջ, որը հարկավոր է դիտարկել նաև որպես վերը նշված ադրբեջանա-ռուսական և ադրբեջանա-իրանական հարաբերությունների ջերմացման արդյունք: Ընդհանուր առմամբ, հարկ է նույն տրամաբանության ներքո դիտարկել նաև Արցախյան խնդրի շուրջ Բաքվի նկատմամբ Վաշինգտոնի կիրառած ճնշումը. խնդիրը հնարավորինս շուտ կարգավորված տեսնելու ամերիկյան դիվանագիտության ցանկությունը կարող էր նպաստել Բաքու-Մոսկվա հարաբերությունների զարգացմանը:

Հետևություններ

Այսպիսով, կարելի է նշել, որ ստեղծված իրավիճակն այդքան էլ բարենպաստ չէ Ալիև-կրտսերի վարչակարգի համար, թեև ներկայում պաշտոնական Բաքուն ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, Թուրքիայի և Իրանի նկատմամբ բռնել է համեմատաբար ավելի հավասարակշռված դիրքորոշում, իսկ իրավիճակն էլ, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես սպասողական:

Սակայն, մյուս կողմից, ակնհայտ է Արևմուտքի ճնշումը Ալիև-կրտսերի վարչակարգի նկատմամբ՝ պաշտոնական բացատրություն ունենալով նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ մտահոգությունները:

Ընդհանուր պատկերը թույլ է տալիս եզրակացնել, որ արևմտյան տերությունների և, մասնավորապես, ԱՄՆ-ի համար ադրբեջանական ընդդիմությանը (խոսքը, առաջին հերթին, վերաբերում է «Ուղուր» նախընտրական դաշինքին) աջակցելը գերազանցապես հետապնդում է Իլհամ Ալիևի վրա ճնշում գործադրելու նպատակ: Հատկապես մայիսի 25-ին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շահագործման սկզբից հետո ճնշման քաղաքականությունը կարծես թե էլ ավելի հիմնավոր է թվում: Այսինքն՝ առաջին հերթին ԱՄՆ-ին հարկավոր է (թերևս, ժամանակավորապես) թույլ Իլհամ Ալիևի վարչակարգ, որի նկատմամբ հեշտ կլինի հետագայում լրացուցիչ ճնշումներ բանեցնել:

Այդքանով հանդերձ չպետք է բացառել, որ Միացյալ Նահանգները խնդիր ունի լիովին փոխել Ադրբեջանի իշխող ընտրանին՝ Վրաստանի, Ուկրաինայի օրինակներով. իշխանության բերել մարդկանց, որոնք Ռուսաստանի հետ կունենան բավական սահմանափակ

առնչություններ (ինչը չի կարելի ասել Մոսկվայում ուսանած և երկար տարիներ աշխատած Ալիև-կրտսերի մասին), հետևաբար կվարեն միանշանակ արևմտամետ քաղաքականություն, օրինակ՝ Իրանի, Կասպիցի, Հյուսիսային Կովկասի հարցերում:

Հարկ է նշել, որ Ալիև-կրտսերի վարչակարգ-Արևմուտք հարաբերություններում էական որոշակիություն կմտցնի (ժամանակային առումով առնվազն մինչև նոյեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրությունները) Ադրբեջանի նախագահի հավանական այցը Վաշինգտոն, որն, ըստ որոշ տեղեկությունների, կարող է տեղի ունենալ առաջիկա երկուերեք ամիսների ընթացքում:

Պետք է ենթադրել, որ ստեղծված իրավիճակը Մոսկվային և Թեհրանին պարզապես ստիպում է ապահովագրել սեփական քաղաքականություններն Ադրբեջանում: Այլ կերպ ասած՝ իրադրության զարգացման ցանկացած տարբերակի դեպքում նրանք չեն կարող սահմանափակվել սոսկ Ալիև-կրտսերի վարչակարգի աջակցությամբ: Այդ առումով ուշագրավ է Մոսկվայում գտնվող Այազ Մութալիբովի հայտարարությունը «Յենի սիյասեթին» միանալու մասին:

Ի դեպ, պետք է դիտարկել նաև «Յենի սիյասեթ» - Իլհամ Ալիևի վարչակարգ հավանական համագործակցության տարբերակը: Այս համատեքստում ուշադրության են արժանի «Յենի սիյասեթում» ընդգրկված մարդկանց կենսագրությունները: Օրինակ՝ Էլդար Նամազովը և Լալա Շովքեթն անցյալում Հեյդար Ալիևի թիմի մաս են կազմել. առաջինը Ադրբեջանի նախագահ Ալիև-ավագի քարտուղարության ղեկավարն էր, իսկ Լալա Շովքեթը նույն Ալիև-ավագի օրոք զբաղեցրել է Ադրբեջանի պետական քարտուղարի պաշտոնը[1]:

Հետևաբար, կարող է ստացվել բավական հետաքրքիր եռյակ՝ Մոսկվա (Թեհրան) - Էթիբար Մամեդովի գլխավորած «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինք - Ալիև-կրտսերի վարչակարգ, որի գլխավոր նպատակն է իրավիճակը *status quo*-ին հնարավորինս մոտ պահելը:

Ինչ վերաբերում է իրանական գծին, ապա պետք է առանձնացնել 2004թ. աշնանից Ադրբեջանի քաղաքական դաշտում կրկին ակտիվանալու փորձ կատարող Իսլամական կուսակցության գործոնը:

Միանշանակ է, որ հունիսի 19-ին ԼՂՀ-ում կայացած խորհրդարանական ընտրությունների ժողովրդավարության չափանիշներով անցկացումը կարող է էլ ավելի բարդացնել Իլհամ Ալիևի վիճակը:

Ստեղծված իրադրության պայմաններում քիչ հավանական է, որ մինչև այս ձմեռ պաշտոնական Բաքուն Արցախի հարցի շուրջ փորձի ստանձնել որևիցե կոնկրետ փոխզիջումային պայմանավորվածություն: Ավելին, շատ հավանական է, որ առաջիկայում հարցի վերաբերյալ Ադրբեջանի պաշտոնական հայտարարությունները կրեն էլ ավելի կոշտ բնույթ:

Եվ վերջապես, ս.թ. նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո Ադրբեջանում և նրա շուրջ հարկ է սպասել նոր տրամաբանությամբ զարգացումների ակտիվացման:

[1] Ս.թ. մայիսի 24-ին հայտարարվեց «Յենի սիյասեթին» Ադրբեջանի նախկին վարչապետ, այժմ՝ Ադրբեջանի «Գիտնականների և ինժեներների միության» նախագահ Ռագիմ Հուսեյնովի, նախկին առաջին փոխվարչապետ, ներկայում՝ Ադրբեջանի «Արդյունաբերողների և ձեռներեցների միության» նախագահ Վահիդ Ախունդովի և նախկինում բարձր պաշտոններ զբաղեցրած այլ անձանց միանալու մասին:

Հավելված

Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությունում տեղի ունեցած որոշ զարգացումների համառոտ դիտարկում

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի 2004թ. հուլիսի 23-ի հրամանագրով պաշտոնանկ արվեց այդ երկրի Ազգային անվտանգության նախարարությունը (ԱԱՆ) 1994թ. հոկտեմբերից գլխավորող Նամիկ Աբասովը: Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց 1957թ. ծնված գնդապետ Էլդար Մախմուդովը (նրան միաժամանակ շնորհվեց գեներալ-մայորի կոչում)[1], որը մինչ այդ գլխավորում էր Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչությունը (մինչ այդ Մախմուդովը ղեկավարել է ՆԳՆ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը[2]. հետագայում այդ վարչությունը վերացվեց):

Ավելի ուշ, Իլհամ Ալիևի 2004թ. դեկտեմբերի 16-ի հրամանագրով Նամիկ Աբասովը նշանակվեց Ուզբեկստանում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան:

Մախմուդովի նշանակմանը հետևեցին նոր նշանակումներ՝ 2004թ. ամռան ընթացքում Ադրբեջանի ՆԳՆ համակարգից ԱԱՆ «տեղափոխվեցին» հետևյալ անձինք՝

- Բաքու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժնի պետ Խիլալ Ասադովը նշանակվեց Ադրբեջանի ԱԱՆ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ,
- ՆԳՆ թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, գնդապետ Ալիմուսա Ալիևը դարձավ ԱԱՆ կադրերի վարչության պետ,
- ՆԳՆ-ից մեկ այլ սպա՝ գնդապետ Ֆարհադ Վահաբովը, գլխավորեց ԱԱՆ աշխատակազմը:

2004թ. սեպտեմբերի 1-ին ադրբեջանական «Թրենդ» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Էլդար Մախմուդովը նշում է, թե ԱԱՆ-ում սկսվել են համակարգային փոփոխություններ, որոնք կավարտվեն մոտ ապագայում: Այդ բարեփոխումների արդյունքում ստեղծվել են մի քանի գլխավոր վարչություններ (ինչպես, օրինակ, մեկը Հակաահաբեկչական կենտրոնի հիման վրա): Ծրագրվում էր ԱԱՆ մի քանի կառույցներ ևս վերափոխել գլխավոր վարչությունների:

Այստեղ հարկ է նշել, որ ըստ որոշ տեղեկությունների, Էլդար Մախմուդովը ժամանակավոր մարդ է ադրբեջանական ԱԱՆ-ում: Մաքրազտումների, համակարգային փոփոխությունների ավարտից և ս.թ. նոյեմբերին Ադրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո նրա տեղը, թերևս, կարող է նշանակվել Ադրբեջանի նախագահի ազգային անվտանգության հարցերով օգնական, գեներալ-մայոր Վահիդ Ալիևը, իսկ Մախմուդովը կվերադառնա ՆԳՆ, բայց արդեն իբրև նախարար:

2005թ. փետրվարի 12-ին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի ԱԱՆ ռազմական հակահետախուզության գլխավոր վարչության պետ Էլման Գամբարովը սեփական դիմումի համաձայն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից և տեղափոխվել ՊՆ: Գամբարովի տեղը ժամանակավորապես զբաղեցրել է

[1] Ներկայում Էլդար Մախմուդովն ունի գեներալ-լեյտենանտի կոչում:
[2] Էլդար Մախմուդովն ավարտել է Բաքվի Ժողովրդական տնտեսության ադրբեջանական ինստիտուտը:

նույն ռազմական հակահետախուզության վարչություններից մեկի ղեկավար, գնդապետ Նիզամի Շիրինովը։

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կենդանության օրոք որոշակի փոփոխություններ անցկացվեցին երկրի ուժային համակարգերում։ 2000թ. օգոստոսի 1-ի հրամանագրով ռազմական հակահետախուզության ծառայությունը մտցվեց Ադրբեջանի ԱԱՆ համակարգի մեջ, սակայն այդ համակարգից դուրս բերվեց սահմանապահ զորքերի վարչությունը, որը հետագայում ձևափոխվեց պետական սահմանապահ ծառայության։

Ըստ որոշ տեղեկությունների՝ այդ տեղափոխությունների հիմնական նպատակն էր թուլացնել Ադրբեջանի ԱԱՆ-ն արդեն բավական երկար ժամանակ գլխավորող Նամիկ Աբասովի ազդեցությունը նախևառաջ նույն այդ ԱԱՆ-ում, որը սկսած 1994թ. հոկտեմբերից միայն աճել էր՝ թուլացնելով անգամ Հեյդար Ալիևի ազդեցությունը նախարարությունում։

Հայտնի էր, որ Աբասովը և ռազմական հակահետախուզության ծառայության այն ժամանակվա պետ Էլման Գամբարովը բավական վատ հարաբերությունների մեջ էին։ Բացի այդ, սահմանապահ զորքերի դուրսբերումը միանշանակորեն փոքրացնում էր ԱԱՆ զուտ ռազմական ուժի կարողությունները. ԱԱՆ տրամադրության ներքո էին մնալու միայն հատուկ նշանակության ուժերը։ Հանգամանք, որը, բնականաբար, չէր խոսում Նամիկ Աբասովի օգտին։

Եվ վերջապես, համաձայն պտտվող լուրերի, Էլման Գամբարովը համարվում էր Իլհամ Ալիևի մերձավոր մարդկանցից մեկը, որը կարող էր ոչ միայն ներսից հսկել ԱԱՆ-ը և անձամբ Նամիկ Աբասովին, այլև, Հեյդար Ալիևի մահվանից հետո, կանխել Աբասովի հավանական հակաիլհամական քայլերը կամ նույնիսկ Ազգային անվտանգության նախարարի նախագահական հավակնությունները։

Եթե շարժվենք այս տրամաբանությամբ, ապա Էլման Գամբարովի տեղափոխումը Ադրբեջանի ՊՆ, թերևս, նպատակ էր հետապնդում մեծացնել Իլհամ Ալիևի անձնական ազդեցությունը երկրի զինված ուժերում և վերահսկողությունը պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի նկատմամբ։ Չպետք է բացառել, որ առաջիկայում Գամբարովին ՊՆ-ում շնորհվի որևիցե բարձր պաշտոն՝ հետագա աճի հեռանկարով։